դը՝ որուն վրայ որ շատ վստահութիւն չունէր, ներս մտաւ զինքը պաշտպանեց, և շատ կերպով անոր անմեղութիւնը ցոյց, այնպէս որ դատաւորը զինքը ազատ արձակեց։ Մարդս ալ իրեք բարեկամ ունի այս աշխարհիս վրայ. ինչ վիճակի մէջ կ'ըլլան ասոնք մահուան ժամանակը, երբոր Աստուած զինքը իր ատեանը կը կանչէ։ Ստակը, իր սիրելի բարեկամը, սկզբան մէկէն կը թողու զինքը և հետը չերթար։ Ազգականքը և բարեկամք իրեն հետ միատեղ կ'երթան ինչուան գերեզմանին դուռը, և նորէն կը դառնան իրենց բնակարանը։ Երրորդը ուղեկից կ'ըլլայ իրեն հետ ինչուան բարձրագոյն դատաւորին աթոռը, այսինքն իր բարեգործութիւնքը։ Իրմէ առանջ կը կանխեն կ'երթան, իրեն համար կը բարեխօսեն և կ'արդարացնեն զինքը, եթէ բաղմաթիւ և ուղիղ դիտաւորութեամբ եղած ըլլան։

Ցորեւնոյ հատիկը.

Եւրոպայէ այն ինչ հասած նաւու մը միջնայարկը, խաղողական ծովուն կրզինեռուն բնակ երկու երիտասարդք դրան ցորենոյ հատիկ մը. ասոնցմէ երէցը ըսաւ, « անտարակոյս եմ որ ցորեանը օգտակար տունկ մըն է, բայց մէկ հատէ միայն ինչ կ'ելլայ », և արհամարհանք նետեց զայն։ Իր ընկերը, որ աւելի խելացի էր, աճապարեց ու առաւ զայն գետնէն։ Նոյն իրիկունը տընկեց զայն և խնամքով շարունակ փոյթ տարաւ վրան։ Առջի քաղցին մէկ մատնոցի մը մէջ դրաւ ժողվածները. երկրորդ անգամ բաժակի մը մէջ լեցուց, իսկ երրորդ անգամ կրցաւ քանի մը հատիկ իր բարեկամներուն ալ բաժնել. ժամանակաւ, ոչ միայն առատ հունձք ժողվեց, այլ նաև իր երկրին մէջ այնպիսի մշակութիւն մը մտցնելուն փառքն ալ ստացաւ՝ որ ոչ միայն իր այլ և իր հայրենակցաց բաղդը շինեց։ Այսպէս ահա մեծամեծ արդասեաց պատճառ կ'ըլլայ այն՝ որ ոչ աշխատանքի ցամաքութենէն և ոչ արդեանց ուշանալէն կը լքանի։

ՊՈՒԼԱՆԺԷ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

ԱՌԱԿԱՑ

ԳԻՐՔ ԵՐԿԵԱԿ

Թերատս ընդ խաղ նախ փոխուգացին [1] խառնեայ ըզգօն ծերունին.
Ընդ նոյն ապա ընդ արտ 'ի հունձ անց ՀԵրբաղատն Աւգոստեայ [2].
Ըզհետ նոցին շրջիմ ես արդ հասկաքաղ,
Առ 'ի զապրեալն 'ի բազմաչեայց անտի քաղել հընձողաց։

1 Եսովպոս առակախօս Յունաց։
2 Փեդրոս առակախօս Լատինաց։

Սակայն թէպէտ և անդս այս ոչ այնպէս հընձի սպառըսպուռ,
Զի մի մնասցէ հետագայից ինձ անդամոր 'ի հընձել,
Բայց առաւել է զուարճալի, բայց առաւել է դիւրին
Գընալ 'ի մէջ ծածանելոց ատոք հասկաց մանգաղաւ,
Քան թէ խընդրել զոճ հասկաթուռ 'ի մէջ արուգ խոզանին ։
Մի՛ դու զքաղուած իմ պարսաւեր, բարեհամբոյր ընթերցող,
Զի ոչ ամօթ ինձ համարիմ վարել այլոյ հանճարով,
Ըզհայկազինն[1] 'ի չափ տաղի յերկուրեալ գիւտս Եսովպայ ։
Թէպէտ և ոչ նոր ինչ 'ի սմա քան ըզնորայն ասիցեմ,
Թէպէտ և ոչ այսու ստեղծիչ և հայր բանի կոչեցայց ·
Շատ իսկ է ինձ ոչ գոլ բնագրի աղարտիչ ։
Թերևս ընդդէմ երկոցս՝ ընդ՚քեր, ասիցես,
Օտարոտի փետրովք պըճնիս ճայօրէն,
Ուր Թրակացին իսկ 'ի համար ածէ ազգ
Մատենագիրըս զՈրփէոս այլովքն հանդերձ և զԼինոս ։ —
Վառել յիմում իսկ 'ի սըրտի վառի բոց
Նաւթճել պարծանըս հայրենեաց, յածիլ 'ի ձեռս իմաստնոց,
Եւ 'ի դարանըս մատենից առնուլ կայս ·
Այլ ինձ չափով հանճար 'ի բնէ պարգևեալ,
Ըզկայ առնում յոր վայր կարեմ գոլ ժաման ·
Եղեալ ինձ կէտ նըպատակի զառաջեաւ՝
Արծարծանել 'ի սիրտ ըզսէր սոփերի,
Ըզհամազգեաց ածել ըզմիտս 'ի զգօնութիւն և յիմաստ,
Եւ հրահանգել զախորժակս յոճ ինքնազարդ,
Թէպէտ յօտար թէ յիմոյին ինչ 'ի մըտաց հանճարեալ ։
Եթէ ցանկաս ընդ բարգաւաճ ազանց 'ի վէգ գալ 'ի գիր,
Մանկտի հայկազն, ուսիր ըզգրեչ 'ի սմա և զքիմըս կըրթել,
Զասիական սանձահարեալ ոճոյ զշըռայլ ճոխութիւն ։

1 Մխիթար Գօշ առակախօս Հայոց ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ